

Սուրբ Գրիգոր Բարսեղի կողմից 1240 թվականին  
Սանտիսիմոս քաղաքում գրված



Սուրբ Գրիգոր Բարսեղի կողմից 1240 թվականին  
Սանտիսիմոս քաղաքում գրված



Սուրբ Գրիգոր Բարսեղի կողմից 1240 թվականին  
Սանտիսիմոս քաղաքում գրված

# ԱՅԼԵԻՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՎԱՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԶԵՆ

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչությունները յայտնել են Լոնդոնում**
- 4 **Կարծիքներ «Յոյս»-ի 100-րդ համարից յետոյ**
- 10 **Հայաստան` Բնակչության թաքսանակի վտանգավոր անկում**  
Գայիանէ Մկրտչեան
- 11 **Ղարաբաղեան կարգավորում**  
Նայիրա Ջայրումեան
- 12 **Արտահերթ ընտրություններ կարծես չեն լինելու**  
Նայիրա Ջայրումեան
- 14 **Մշակութային քաղաքականություն**  
Վահէ Օշական
- 16 **Պատմաճշ` Էդ մարդը արձանա եղել**  
Շանթ Բաղրամեան
- 18 **Շուշիի մզկիթների պահպանումը**  
Արմինե Մելիք-Իսրայելեան
- 21 **Շոգ օրեր` օգտակար խորհուրդներ**
- 22 **Ժպիտ` 5 բարեկամ, 5 թշնամի**
- 23 **Վերանորոգումը վնասակար է**
- 24 **Մարզանք` Կոպա Ամերիկա-2011**  
Արման Տ. Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

# Յոյս

Երկշաբաթերթ

Ե սարի, քի102, Յուլիս 13, 2011,  
1200 քուման  
Հայաստանում 320 դրամ



- 5 **Աշուղ Ճատուրօղլու եւ Օբամայի նամակագրություն**
- 6 **Բարեւագիր Ճատուրօղլուց Բարաքին**
- 7 **Օբամայի պատասխանը Ճատուրօղլուն**
- 9 **Տեսա՛ր**

## Պ ա Ր Ա Կ Ե Ր Ե Ն ք ա ժ ի ն

2	<b>Հայկական Կինոսի` Հիմնադրությունից մինչև «Ոսկե Միրան»</b>	5	<b>ոեժիսորներ</b>	9	<b>Արտաւազ Փեղեշեան</b>
2	<b>Հիմնադիր` Համօ Բեկնազարեան</b>	6	<b>Փարաջանովն ու «Նռան գոյնը»</b>	10	<b>Հայ մշակույթի արտացոլումը իրանական կինոյում</b>
3	<b>Բրեժնեւեան ժամանակաշրջանի</b>	8	<b>«Ոսկե Միրան» կինո- փառատօնը</b>		<b>Չրոյց Արքի Յովհաննիսեանի, Չաւէն Գուկասեանի եւ Ռոբերթ Սաֆարեանի միջև</b>
			<b>Հայ դէմքեր միջազգային կինոյում</b>		

<p><b>Յոյս</b> Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօնատէր` Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր` Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ`</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինե Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում` Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ` Քարմէն Ազարեան</p> <p><b>Կայք</b> Քաջիկ Սաֆարեան</p> <p><b>Մարզական</b> Արման Ստեփանեան</p> <p><b>Բաժանորդագրութիւն</b> Քարին Եաղուբի</p>	<p><b>Հասցէ`</b> Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 <b>66495180 66492693</b></p> <p>Հեռախօս-հեռապատճեն` <b>66495208</b></p> <p><b>hooyes@inbox.com</b> <b>www.hooyes.com</b></p>
--	---	--	--

# ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻՆ ՎԱՆՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՅՏՆԻԵԼ ԵՆ ԼՈՆԴԱՆՈՒՄ

**Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի դիւանը հաստատել է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչութիւնների անհետացումը**



Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչութիւններից: 17-րդ դար



Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչութիւններից: 17-րդ դար



Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչութիւններից: 17-րդ դար

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ թանգարանի հինգ մանրանկարչութիւնների եւ երկու իւղաներկ նկարչութիւնների մասին առաջին անգամ գրեց Հայաստանի «Ազգ» օրաթերթը՝ իր Յուլիսի 7-ի համարում: Ըստ այդ գրութեան, Յունիսի 12-ին որոշ անձինք Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի որոշ մանրանկարչութիւններ վաճառել են ցանկացել Լոնդոնում: Ահա «Ազգ»-ի գրութիւնը ամբողջութեամբ:

## ԹԱԼԱՆԻԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻՑ

Ըստ մեզ հասած տեղեկութիւնների, Յունիսի 12-ին երկու հայ անձնաւորութիւններ Լոնդոնում պատարագի աւարտին մօտեցել են Ներսէս աւագ քին. Ներսէսեանին «նրա կարծիքը իմանալու համար 5 հայկական մանրանկարների եւ երկու իւղանկարների վերաբերյալ: Նրանց հետաքրքրում էր այդ պատկերների նիւթական արժէքը վաճառքի դնելու պարագայում: Տէր Ներսէսը ճանաչում է պատկերների պատկանելութիւնը, որպէս մասունքներ Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի եւ բացատրում է երկու անձերին դրանց գողացած լինելը: Նկարների պատկերները տպւած են վանքի տպագրւած ձեռագրերի ցուցակում, եւ նկարների տակը տեղադրւած արձանագրութիւնները պարսկերէն գրութեամբ տալիս են պատկերների նկարագրութիւնը:

Ս. Ներսէսը նկարների մասին անմիջապէս տեղեկացնում է Անթիլիաս, Արամ կաթողիկոսին, Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանին, եւ Նոր Զուղայի թեմական խորհրդին: Ըստ Անթիլիասի վեհարանի քարտուղար Խաչիկ Դեղէյեանի «Արամ Վեհափառը, տեղեկանալով կատարածի մասին, հրահանգել է Նոր Զուղայի ազգային իշխանութիւններին անյապաղ եւ ամենայն լրջութեամբ հետեւել խնդրին: Թէ իրականում ի՞նչ է կատարել ձեռագրերի հետ, կարող են պարզել միայն վերոյիշյալ պատասխանատուները, որոնք ցարդ լռում են, այնինչ ոչ միայն իրանահայ համայնքը, այլեւ ողջ հայ ժո-

Ս. Ներսէսը նկարների մասին անմիջապէս տեղեկացնում է Անթիլիաս, Արամ կաթողիկոսին, Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանին, եւ Նոր Զուղայի թեմական խորհրդին: Ըստ Անթիլիասի վեհարանի քարտուղար Խաչիկ Դեղէյեանի «Արամ Վեհափառը, տեղեկանալով կատարածի մասին, հրահանգել է Նոր Զուղայի ազգային իշխանութիւններին անյապաղ եւ ամենայն լրջութեամբ հետեւել խնդրին: Թէ իրականում ի՞նչ է կատարել ձեռագրերի հետ, կարող են պարզել միայն վերոյիշյալ պատասխանատուները, որոնք ցարդ լռում են, այնինչ ոչ միայն իրանահայ համայնքը, այլեւ ողջ հայ ժո-

ղովուրդը իրաւունք ունի իմանալու ճշմարտութիւնը եւ յատկապէս խնդրի անմիջական պատասխանատու Նոր Ջուղայի թեմական խորհրդից եւ թեմի առաջնորդ Բաբկէն արք. Չարեանից սպասում է յստակ բացատրութիւն:

«Ազգ»-ը հրատարակել էր նաեւ մանրանկարչութիւնների պատկերները, որոնց ներքեւում պարսկերէն բացատրութիւններ կային



Ար. Գրիգոր Բաբկէն արք. Չարեանի 1913 թ. հրատարակած «Ազգ»-ի թերթի մէջ հրատարակուած նկարը:

ռազրերից առանձին մանրանկարչութեան էջեր:

Անմիջապէս կապել եմք մեզ վստահած մասնագէտ անձանց հետ՝ աւելի մօտկից ստուգելու հարցը եւ մեզ տեղեակ պահելու, որպէսզի օրինական միջոցներով խնդիրը պարզենք:

Առ այդ՝ հարցը խորհրդապահական ձեւով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով:



Ար. Գրիգոր Բաբկէն արք. Չարեանի 1913 թ. հրատարակած «Ազգ»-ի թերթի մէջ հրատարակուած նկարը:

ուեալ գործերի մասին: Թէ ինչպէս են այդ տեղեկութիւնները հասել «Ազգ»-ին այժմ պարզ չէ, եւ նոյնիսկ կարելի էր կասկածանքով դիտել լուրը, եթէ Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանը չհաստատէր լուրը՝ նախ «Արաքս» շաբաթաթերթի հետ հեռախօսագրոյցում, յետոյ Յուլիսի 9-ին, հետեւեալ պաշտօնական հաղորդագրութեամբ.

**ՄՊԱՅԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՒԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

«Սպահանի հայոց թեմական խորհուրդը մեր ժողովրդին յայտնում է, որ տեղեկացել է՝ Անգլիայում աճուրդի են դրել Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի ձե-

կով, եւ ներկայ փուլում ստուգում են հանգամանքները՝ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով:

Այսու մեր ժողովրդին դիմում ենք, որ անհիմն մեկնաբանութիւններից խուսափեն եւ վստահ լինեն, որ Սպահանի հայոց թեմի ազգային մարմինները առաջնորդ Սրբազան Զօր գլխաւորութեամբ նախանձախնդիր են եւ այս հարցը հետապնդելու են մինչեւ բարւօք լուծում»:

Եթէ մի բան պարզւում է այս հաղորդագրութիւնից, դա այն է, որ ճիշտ է, Անգլիայում են յայտնւել «Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի ձեռագրերից առանձին մանրանկարչութեան էջեր»: Իսկ

թէ ինչու այդ մասին հանրութեան տեղեակ չի պահել Սպահանի հայոց թեմի ազգային դիւանը, հաղորդագրութիւնը բացատրում է. «հարցը խորհրդապահական ձեւով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով»: Մի խօսքով, հարցը պիտի գաղտնի պահւէր, որպէսզի յանցագործին ի յայտ բերելու գործընթացը չվնասւէր:

Սպասելի էր, Սպահանի թեմի յարգելի դիւանը, այժմ, հարցը բացայայտելուց յետոյ, աւելի յստակ եւ մանրամասն բացատրութիւններ տար հանրութեանը, անհետացած մանրանկարչութիւնների, դրանց պահպանման պատասխանատու անձանց կամ մարմինների վերաբերեալ, ոչ թէ պահանջատրի դիրքերից դիմէր ժողովրդին եւ խօսէր հաւանական «անհիմն մեկնաբանութիւններ»-ի մասին: Երբ արդէն իրենք էլ հաստատում են, որ վանքի գոյքերի մի մասը յատնւել է երկրից դուրս, կամ աւելի պարզ լեզուով գողացւել է, եւ այդ մասին ոչ մի յայտարարութիւն չի կատարւել մինչեւ հայաստանեան մի թերթի բացայայտումը, էլ ինչ խօսք կարող է լինել «անհիմն մեկնաբանութիւններ»-ի մասին: Լաւ կը լինէր գոնէ Սպահանի թեմի ազգային դիւանը յստակեցնէր ինչ անհիմն մեկնաբանութիւնների մասին է խօսքը: Ահա թէ ինչպէս պատասխանատու մարմինը իր թերութիւնների մասին խօսելու փոխարէն՝ հանդէս է գալիս պահանջատիրոջ դերում. իրենք ամէն բան արել են եւ ամէն բան ճիշտ ընթացքի մէջ է, միակ դժւարութիւնը ժողովրդի «անհիմն մեկնաբանութիւններն» են: Հաղորդագրութեան մէջ խօսւել է «ձեռագրի էջերը վերադարձնելու» մասին: Յոյսով՝ դա հնարաւոր լինի, բայց թէ այդ ինչպէս է տեղի ունենալու, կարօտ է Սպահանի թեմի բացատրութիւններին:

# ԿԱՐԾԻՔՆԵՐ «ՅՈՅԱ» ԵՐԿՆԱԲԱԹԱԹԵՐԹԻ 100-ՐԴ ՀԱՄԱՐԻՉ ՅԵՏՈՅ

Շնորհաւորելով «Յոյս»-ի 100-րդ համարի առիթով, որպէս հայաստանաբնակ մի արւեստագէտ, ասեմ, որ իրանահայ մամուլի այս երիտասարդ ներկայացուցիչը բաւականին հետաքրքիր է իր բազմակարծութեամբ: Հետաքրքիր են մշակութային անդրադարձներն ու առողջ մտեցումներն ունեցող հարցազրոյցները յատկապէս: Դրանց մէջ առանձնակի հետաքրքիր են Հայաստանի մտաւորականների հետ, նրանց մասին ներկայացուող նիւթերը, որը սփիւռքի հայի վերաբերմունքն է իր ազգակցի հանդէպ: Դա խօսում է նաեւ նրանց ճանաչողութեան տարածման մասին, ինչը նոյնպէս շատ կարեւոր է եւ «Յոյս»-ը բաւականին հետեւողական է այս առաքելութեանը:

Յուսանք, որ հետագայում այդ էջերը աւելին կը լինեն:

*Ծովինար Յովհաննիսեան  
Կոմիտասի անւան կոնսերւատորիայի դասախօս, պրոֆեսոր,  
ստեղծագործող քանոնահարուհի*

Տարուց աւելի է, ինչ ծանօթ են իրանահայ այս պարբերականին: Այն երեւի թէ միակ սփիւռքահայ մամուլի օրինակն է, որ Հայաստանում գտնուում ենք: Հետաքրքիր է իր մտեցումներով ու երկլեզու տպագրութեամբ, ինչը կարծում են աւելի է կարեւորում նրա գոյութիւնը հենց Իրանի Իսլամական Հանրապետութիւնում, իբրեւ ազգային փոքրամասնութեան կողմից տպագրուող մամուլ, ուր հետաքրքիր երկխօսութիւն է սկսւում մշակոյթների ու քաղաքակրթութիւնների միջեւ, կարծում են... Միայն մի առաջարկ, կամ խնդրանք, նոր անդրադաձներ ունե-

նան նաեւ Իրանի ներքին կանոններին առօրեայ կեանքում եւ ընդունած, օրէնքով սահմանած կարգերին, քանի որ լինելով բաւականին մօտ հարեւաններ մեր քաղաքացիները այդ երկրում լինելու պարագայում յստակ պատկերացնեն ինչ է կարելի եւ ինչը ոչ, քանի որ Իրանը իր դիմագծով բաւականին ինքնատիպ երկիր է:

Շնորհաւորում են 100-րդ համարի առիթով, մաղթում հասնէք 1000-րդ ին ու աւելին, կանաչ ճանապարհ Ձեզ:

*Հրաչ Հայրապետեան  
Գեղանկարիչ,  
ՀՀ նկարիչների միութեան եւ  
Դանիայի Հիլերոտ քաղաքի «Նոր  
Արւեստի» միութեան անդամ*

Հայրենիքից դուրս տպագրուող հայկական մամուլը Հայաստանում այնքան էլ տարածում չունի, յատկապէս նրանց համար, ովքեր չեն օգտուում համակարգչից ու ինտերնետային կայքերից: Իրանում տպագրուող հայկական «Յոյս» երկշաբաթաթերթը այդ քչերից է, որը տարածւում է եւ ձեւաւորում է իր կարծիքը: Մէկ լրագրողի նիւթով անգամ դառնում է սպասւած... Երկու տարի է ինչ յաղթահարելով դասական ուղղագրութեան դժւարութիւնը մշտապէս ընթերցում են: Սա այն մամուլն է, ուր տարբեր նախասիրութիւնների տէր ընթերցողների համար միշտ էլ մի հետաքրքիր էջ կը գտնւի: Կարծում են, որ «Յոյս»-ը անընդհատ ձգտում է կատարելագործելու, իր տեսակը պահպանելով, ինչն ուրախալի է եւ դեռ նոր ու հետաքրքիր էջեր կարող է ունենալ, բազմակարծութեան վրայ յենելով եւ գնահատելով նոր միտքն ու միջամտութիւնը:

Բարի ու բովանդակալից երթեր եւ արդէն նաեւ մեր թերթին:

*Սուսաննա Աղաջանեան  
Ինժեներ*

Շնորհաւոր 100-րդ համարդ սիրելի «Յոյս», որ դարձել ես սեղանի թերթ հազարաւոր մղոններ այս կողմ, կապելով մեզ անտեսանելի թելերով իրանահայ համայնքին ու նրա ստեղծագործ մտքին:

Բաւականին գովելի է, որ Հայաստանի հայերս կարողանում ենք նաեւ մեզ տեսնել Քո էջերում, համախմբւած աշխատանքի շնորհիւ, որը պայմանաւորւած է արտօմատեր, խմբագիր, լրագրող ներդաշնակ կապով նաեւ:

Ինքս առողջապահութեան ոլորտի ներկայացուցիչ եմ ու ամենատարբեր հետաքրքիր նիւթերի հետ մէկտեղ հաճոյքով եմ ընթերցում բժշկական թեմաներին վերաբերող նիւթերը «Յոյս»-ի էջերում:

Համար առ համար զգացւում է, որ կայ ձգտում թերթը աւելի հետաքրքիր դարձնելու եւ դա ուրախալի է յատկապէս մեր՝ ընթերցողներին համար... «Ով շատ է տալիս, նրանից նաեւ շատ են պահանջում», օրէնք է, ուստի մեր սպասելիքներն էլ մեծ են «Յոյս»-ն աւելին տեսնելու...


Մաղթում են նորանոր հարուստ էջեր, Ձեր աշխատակազմին ու տնօրինութեանը մեծ յաջողութիւններ, բարի եւ ազնիւ երկխօսութիւն՝ տարածութիւն չճանաչող ընթերցողներին հետ:

*Հայկուհի Իսրայէլեան  
Դեղագէտ, դեղագործ*

Մագամ ի ՚նչ իմ ուզում ֆիզնից,  
 իմ ուզածը մե հաս բառ ա,  
 Թե վուր ասիս, գովիդ կոսի իմ  
 շունգուտի Լարն Օբամա:

Դուն հենց գիդիս  
 դարդս ես ֆու մե  
 բառն է,  
 O, don't be so FUNY,  
 ո՛վ Մասուրօղլի:

# ԴԻՒԱԿԱԳԻՏԱԿԱԿ ԸԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԱԿԱԿԱՅ ԲԼԹՈՒԼ ԱՇՈՒՂ ԾԱՏՈՒՐՈՂՈՒ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՆԴԱՍԳԱՎ ԲԱՐԱԿ ՕԲԱՄԱՅԻ ԱՆՁԵՒ



«Յոյս»-ի համար 94-ում հրատարակած Ծատուրօղլու հետ մեր մուզիկալ հարցազրույցից յետոյ» լուր չունեինք մեր համայնքի մշակութային կեանքի պարտզի անւանի բլբուլ Աշուղ Ծատուրօղլուց, մինչեւ սրանից մի շաբաթ առաջ, երբ յանկարծ ինքաքս-ում տեսնում են ի-մէյլ կայ [tzadooroghli@gmail.com](mailto:tzadooroghli@gmail.com)-ից: Բացում են ի-մէյլը եւ կարդալով այն, հասկանում են նրա քանիամսեայ լռութեան պատճառը: Այսպիսի մեծ մարդիկ իզուր չեն լռում. երբ ձայն չկայ նրանցից, մի կասկածէք, որ զբաղւած են յոյժ կարելոր գործերով: Ի-մէյլին կցւած էր ԱՄՆ-ի նախագահին հասցեագրւած Իրանահայ աշուղի նամակը եւ Օբամայի պատասխանը նրան: Նաեւ այդ նամակների փոխանակութիւնից յետոյ գրւած աշուղի տաղը: Թէ ինչ աստիճան կարելոր թեմաներ են քննարկել այդ նամակներում, դժւար է չափազանցել: Ահա կարդացէք եւ տեսէք, ինչ յանդգնութեամբ է Ծատուրը պահանջել մեր ժողովրդի իրաւունքները: Վերջին տաղը, իհարկէ, գրւել է յատուկ պայմաններում, Բեն Լադենի սպանութիւնից մի առ ժամանակ յետոյ, երբ աշուղը մի քիչ զգուշացել է, մի քիչ փոշմանել իր ցուցաբերած յանդգնութիւնից: Ինչ որ է, տպագրութեան ենք յանձնում բանաստեղծութիւնների բնագրերը, թող ընթերցողը ինքը կարդայ ու զարմանայ:

# ԲԱՐԵՒԱԳԻՐ ՇԱՏՈՒՐՕՂԼՈՒՅ ԲԱՐԱՔԻՑ

Մէ խօսք ունիմ իլթիմագով, թէկուզ մէ քիչ դառն, Օբամա,  
Անգաճ արա, մատաղ իմ քիզ, հանի սրտիս խարն Օբամա,  
Աշխարն աշխարով կշտացաւ, ես քեզանից սով մնացի,  
Սրտունս ինթիզար ունիմ, օր ասես են բառն Օբամա:

Ամօթ է, մա ՚րդ, խօսք իս տւի, արի Բարա ՚ք, խօսի բառըն,  
Ինչ իս շիտակ խօսքը ծռուն, տանուն գցուն ծորն ու սարըն,  
Դուն են գլխէն իմաստուն իս, մի գցի քու էթիբարըն.  
Լրանուն է արդէն դարըն, թափիր գոթիդ քարն, Օբամա:

Ջղերիս հիդ խաղ իս անուն, չիս նայուն իմ դժար հալին,  
Յէնց ասելու վախտն ի գալի, տալիս իս մեխին ու նալին,  
Արի տղամարդու նման մէ անգամ էլ խփի խալին,  
Էն ինչ պիտի ասես, ասա ՚, տու ՚ր իմ Մասիս սարն, Օբամա:

Է ՚յ աղալաթ հուքմի- հեթիմ, քու դռանն իմ կանչուն հարա,  
Ասա ՚, միզ իդ ի ՚նչ իս կամուն, բալքամ դարդիս անիս չարա,  
Մագամ ի ՚նչ իմ ուզուն քիզնից, իմ ուզածը մէ հատ բառ ա,  
Թէ վուր ասիս, գովքդ կոսի իմ չունգուռի լարն Օբամա:

Ծատուրօղլին ասաւ.- զալուն, խիլքըդ Գիւլին բար մի անի,  
Խօսք իս տւի, խօսքիդ կացի, ստով քիզ խարաբ մի անի:  
Էրդողան ու Գիւլի խաթիր հարցն օրակարգից մի հանի:  
Ասա ՚,- գրողը քիզ տանի,- վերջացրու էս ջառն, Օբամա:





## ՕՔԱՆԱՅԻ ՊԱՏԱՆԻԱԿՆԵ ՇԱՏՈՒՐՈՂՈՒՆԵ

Նամակդ ստացիլ իմ, ո՛վ Ծատուրօղլի,  
Խօսքիրդ նման ին նաբաթ ու նողլի,  
Լիզուդ շաքար ունիս, լամզով կու խօսիս,  
Առջիւրդ լոնգ գցի պիտի Քեօռօղլին:

Դուն շատ ուրբաթախօս ու սրամիտ իս,  
Չիմ ասի, թէ ախմախ ու միամիտ իս,  
Համա politics-ից հեչ բան չգիտիս,  
Օ, I beg your pardon, ո՛վ Ծատուրօղլի:

Խփում իս համաշա միեւնույն լարին,  
Գովք իս ասուն անվերջ քու Մասիս սարին,  
Նազլու եարը թողած կպիլ իս բառին,  
I am for you sorry, ո՛վ Ծատուրօղլի:

Ախար չիս հասկանում, որ էդ մէ բառըն  
Ոնց որ իմ հեծած ջուխտ ձիու օֆսարըն,  
Թէ ձիռից թողեցի ինձ կուտան քարըն,  
Did you understand?!, ո՛վ Ծատուրօղլի:

Հիմի որ կողմով օր ուզում՝ քշում իմ,  
Յիփ տռտիգ ին տալի, սանձը քաշում իմ,  
Էրկուսի հուքին էլ հալում մաշում իմ,  
Էս էլ քանի՛ տարի, ո՛վ Ծատուրօղլի:

Բլբուլ իս էլի ու մտիլ իս բաղն,  
Յալա դիռ չիս մարսի դուն Ղարաբաղն,  
Յիմի էլ ուզում իս քու Ադրի դաղն,  
Ախորժակիդ մեռնիմ, ո՛վ Ծատուրողլի:

Մէկ էլ տեսար գլխիդ կը փչի հովն,  
Կեւնիս ինձնից կուզիս դու ծովից-ծովն,  
Թէ վուր ուզիմ էրթամ յիս քու խաթրովն,  
Խաղը՛ս տանուլ կուտամ, ո՛վ Ծատուրողլի:

Դուն իսկի չիս գիդի խաղի կանոնն,

Ասում իս ծովից-ծով թամամն ի քոնն,  
Ստորագրիլ է Վուդրո Վիլսոնն,  
Գնա, իւրնից ուզէ, ո՛վ Ծատուրողլի:



Ծատուր ախպօրս ասիմ, գլուխս խառն է,  
Գանգունս գլոբալ թամամ աշխարն է,  
Դուն հէնց գիդիս դարդս էտ քու մէ բառն է,  
Օ, don't be so funny, ո՛վ Ծատուրողլի:

Յիս մեր նոր աշխարքի քարտէզն իմ գծում,  
Նաֆտի լուլի համար ճամփայ իմ բացում,  
Դուն էլ քիզ առանց նաֆտ մէջտեղ իս քցում,

It is not kind of you, ո՛վ Ծատուրողլի:


Արի, Ծատուր ինձնից մալուլ մի կենայ,  
Չունգուռդ առ մէ ոտ Անտալիա գնա,  
Մտի ծովը էրված սիրտդ հովանայ,  
Take it easy my dear, ո՛վ Ծատուրողլի:

Դէ, կէս քշեր էլաւ, քնելու ժամ ա,  
Պիտի բայ-բայ ասեն յիս քիզ ակամայ,  
Մաղթում իմ քաղցըր քուն, անու՛շ երազնիր,  
Տաք-տաք համբոյրներով, Բարաք Օբամա

# ՏԵՆԱՐ

Տեսա օր, Ծատուրոլի, էդ հոքաւորին,  
Անունը էլ ես չեմ ուզում տամ նորից,  
Յանկարծ վեր չկենայ, բաղ ազ տաս տարի  
Բեն Լադենի նման գայ քեզ էլ ճարի.  
Կամ թէ ուզես երթաս դու էլ Ամրիկա,  
Կողին ընկնի ու քիզ ասի.- Չէ, մի գայ,-  
Քանի հիդ իմ ասի, խիլքիդ խիլք ասա,  
Քիզ չկապող բանի մասին մի խօսայ,  
Ազգի գործերի մէջ քիթդ մի կոխի,  
Ախր, դու տակն իս, թէ՞ գլուխը սոխի,  
Ո՞վ իս դուն, օր նստում, դալամ իս սրում,  
Բարաք Օբամային նամակ իս գրում,  
Վիլ արա, Ծատուր ջան, գնա քու բանին,  
Դուն աշուղ՝ ծառայ իս Մշոյ Սուլթանին:

Դու էլ, ժողովուրդ ջան, լսի իմ կոչը,  
Արի՛, վիլ արա էդ Բարաքի պոչը,  
Նամարդի մննաթը իզուր մի քաշի,  
Օտարների դռան շենը մի մաշի,  
Մոռացի իլթիմազն ու աղաչանքը,  
Չեռունըդ պինդ պահի թուրն ու թֆանքը:  
Ու թէ թֆանք չունիս, էլի՛ խելացի,  
Աշխարում քու դոստ ու դուշմանն իմացի,  
Էսբան դիմացիլ իս, քիչ էլ դիմացի:  
Քու լաւ օրն էլ կը գայ, տեղդ պինդ կացի:



# ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻԱՔԱՆԱԿԻ ՎՏԱՆՓԱԽՈՐ ԱՆԿՈՒՄ

## ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՔԱՅԼԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԴԵՄ

Գայիանէ Սկրտչեան

(Չախից աջ) Կարէն Աղամեանը, Թաթուլ Մանասերեանը, Լեւոն Անանեանը եւ Կարինէ Դանիէլեանը քննարկում են արտագաղթը



Հայաստանում ահագնացող արտագաղթի ծաւալներից անհանգստացած մի խումբ մտաւորականներ բաց նամակ են յղել ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանին եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանին՝ կոչ անելով քայլեր ձեռնարկել երկրի համար այս վտանգաւոր միտումը փոխելու ուղղութեամբ:

Նամակի հեղինակներն առաջարկում են կառավարութեանն ամենամօտ ժամանակներում հասարակութեանը եւ ԱԺ-ին ներկայացնել Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը շտկելու որոշակի եւ վստահութիւն ներշնչող միջոցներ: Գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանը նշում է, որ արտագաղթը տարիների ընթացքում շարունակ արձանագրել է, սակայն հիմա հասել են մի հանգրւանի, որ այլեւս չեն կարող հանգիստ նայել, թէ ինչ է կատարուում: «Դատարկել են գիւղերն ու փոքր քաղաքները: Պէտք է գիտակցենք մեր սահմանամերձ բնակավայրերի ամայացումը այն դէպքում, երբ մեր հարեւանները յամառօրէն փորձում են իրակա-

նացնել իրենց ռազմատենչ նպատակները: Պէտք է հասկանանք, որ սահմանամերձ բնակավայրերը մեր սահմանաբերդերն են», - ասում է նա: Մտաւորականներին յատկապէս անհանգստացնում է այն հանգամանքը, որ գիւղերից կամաւորութեան սկզբունքով մարդկանց հաւաքագրում են ու տանում ՌԴ հեռաւոր շրջաններ, որտեղ էժան աշխատուժի կարիք կայ: «Դա ռուսական ծրագիր է՝ «Օգնութիւն հայրենակիցներին»: Սա արդէն անկախ երկրի պահածք չէ: Նման գործընթացները կը կանգնեցնեն երկիրը ժողովրդագրական վիճակի վտանգի առջեւ», - ասում է «Յանուն մարդկային կայուն զարգացման» ՀԿ նախագահ Կարինէ Դանիէլեանը: Ազգագրագետ Հրանուշ Խառատեանը նշում է. «Մեզ նման խեղճ, կոռունպացւած, մարդու իրաւունքները ոտնահարող երկրի համար նման ծրագրերը ուղղակի փրկութիւն են գերադաս գոյութիւնից: Միայն հայ-

րենասիրութեամբ մարդկանց այլեւս չենք կարող պահել մեր երկրում»: Նա յոյս ունի, որ եթէ կազմակերպւեն ԱԺ լսումներ, ապա արդիւնքում կը ձեւաւորուի աշխատանքային խումբ, որն էլ իրատեսօրէն գնահատելով իրավիճակը՝ վերլուծող ծրագրեր կը մշակի եւ կոնկրետ քայլեր կը ձեռնարկի: Ըստ Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալների՝ 2011 թ. Յունւար-Ապրիլ ամիսներին Հայաստան ժամանողների եւ Հայաստանից մեկնողների թիւ բացասական սալդոն կազմել է 47.610 մարդ: Յունիսի 30-ին անցկացւած Հայ ազգային կոնգրեսի հանրահաւաքում ՀԱԿ-ի անդամ Արամ Մանուկեանը յայտարարել է, որ վերջին 2,5 տարւայ ընթացքում Հայաստանը լքել է 250 հազար մարդ:

# ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄ

## ՓՈՐՁԱԳԷՏՆԵՐԸ ԵՆԹԱԳՐՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԵԽԱՎՓԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Նայիրա Հայրունեան

Ղարաքաղեան կարգաւորման հարցով Կազանում անցկացւած Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի գագաթնաժողովը բանակցային գործընթացի ծախողում չդարձաւ, եւ, հաւանաբար, դրանից ակնկալիքները դեռ կարող են արդարացել:

Յունիսի 24-ին Սերժ Սարգսեանի, Իլհամ Ալիեւի եւ Դմիտրի Մեդւեդեւի հանդիպումից յետոյ, որի ժամանակ, ի հեճուկս բոլոր սպասումների՝ չստորագրուեցին Ղարաքաղեան կարգաւորման հիմնարար սկզբունքները, Ֆրանսիայի արտգործնախարարութեան կայքում տեղեկատուութիւն է յայտնուել, որի համաձայն բանակցութիւնները կը շարունակեն, եւ առաջիկայում համանախագահները կայցելեն տարածաշրջան: Այն մասին, որ Յունիսի 24-ին Կազանում կողմերը «չկարողացան համաձայնութեան գալ ընդամենը մի փոքր բանի շուրջ», վկայել է գագաթնաժողովի միանգամայն հանգիստ ամփոփիչ յայտարարութիւնը, որում նշուում է, որ բանակցութիւնները կը շարունակուեն: Հայ փորձագետները ենթադրում են, որ շուտով բանակցութիւնների ձեւաչափը կը փոխուի, եւ որ փաստաթղթի ստորագրումից յետոյ Ղարաքաղը կը վերադառնայ բանակցային սեղանի շուրջը: ՀՀԴ կուսակցութիւնն արդէն այսօր առաջարկում է արձանագրել այն փաստը, որ Հայաստանը Լեռնային Ղարաքաղի անկախութեան եւ անվտանգութեան երաշխաւորն է եւ ԼՂՀ-ի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքել: ՀՀԴ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը համոզուած է, որ այս ամէնն անհրաժեշտ է անել այսօր, քանի որ միայն այդ



դէպքում դա հնարաւոր կը լինի համարժէք արձագանք համարել: Ղարաքաղում կարծում են, որ բանակցութիւնների ելքը կարող է լինել միայն ԼՂՀ անկախութեան ճանաչումը: ԼՂՀ արտգործնախարարի խորհրդական Ռուբէն Զաքարեանը յայտարարել է. «Այն իրավիճակում, երբ Ադրբեջանը յայտարարում է, որ ինքը ոչինչ չունի զիջելու, մնում է միայն մէկ ելք՝ միջազգային հանրութիւնը պէտք է ճանաչի Լեռնային Ղարաքաղի անկախութիւնը, որից յետոյ բանակցութիւնների սեղանի շուրջը պէտք է նստեն Ղարաքաղն ու Ադրբեջանը»: Երկրորդ գործօնը, որի փոփոխման հնարաւորութեան մասին խօսում են փորձագետները, Ռուսաստանի դերն է կարգաւորման մէջ: Վերջին երեք տարիներից ՌԴ նախագահ Դմիտրի Մեդւեդեւը ստանձնել է «գլխաւոր միջնորդի» դերը եւ կազ-

մակերպել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների 12 հանդիպում «Ռուսաստանի հովանուներքոյ»: Համաշխարհային մանուլը, ինչպէս նաեւ Ռուսաստանի պուտինամետ (ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտին) ՁԼՄ-ները գրում են, որ Կազանում փաստաթուղթ չստորագրելը ոչ թէ Ռուսաստանի, այլ Մեդւեդեւի ծախողումն էր: «Եւրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ Կարէն Բեքարեանը ընդգծել է բանակցային գործընթացում համանախագահներից մէկի կողմից միջնորդի դերը մոնոպոլիզացնելու անհնարիւնութիւնը, քանի որ դա յղի է վտանգաւոր հետեւանքներով: «Հայկական կողմը բարձր է գնահատում Ղարաքաղեան խնդրի լուծման գործում միջնորդների, մասնաւորապէս Ռուսաստանի ջանքերը, սակայն, այդուհանդերձ, որեւէ մէկի կողմից հակա-

# ԱՐՏԱՆԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐԾԵՄ ՉԵՆ ԼԻՆԵԼՈՒ

*Նայիրա Չայրումեան*

մարտութեան մոնոպոլիզացիան անընդունելի է»,- յայտարարել է փորձագէտը: Սակայն, կարծիք կայ, որ ՌԴ նախագահը ամենեւին էլ հիասթափուած չէ եւ դեռ կասի իր խօսքը: Եթէ նախագահ Մեդւեդեւը հիասթափուած լինէր, ապա նա հրապարակաւ կը հաղորդէր այդ մասին Կազանի հանդիպման կողմերին, կարծում է «ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը՝ մեկնաբանելով «Կոմերսանտ» թերթի տեղեկատուութիւնն այն մասին, որ ՌԴ նախագահն այնքան հիասթափուած է Յունիսի 24-ի Կազանի զագաթնաժողովի արդիւնքներից, որ պատրաստ է դադարեցնել իր միջնորդական առաքելութիւնը դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործով: Յիշեցնենք, որ Ռուսաստանը «հիասթափութիւն» չի արտայայտել: Յամենայն դէպս, պաշտօնական «հիասթափութիւն» ոչ ոք չի արտայայտել, այդ թում մտել՝ ԱՄՆը: Միայն ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Վիկտորիա Նուլանդը նշել է, որ «Չայաստանի եւ Ադրբեյջանի նախագահները Կազանում չեն կարողացել համաձայնութեան գալ հիմնարար սկզբունքների շուրջ: Սակայն, [ՌԴ] նախագահ [Դմիտրի] Մեդւեդեւի մասնակցութեամբ իրենց համատեղ յայտարարութիւնում երկուսն էլ նշել են, որ բարելաւել են փոխյարաբերութիւնները որոշ հարցերի շուրջ, համաձայնել են աշխատել հիմնարար սկզբունքների վրայ եւ կրկին հանդիպել ապագայում: Բայց ես կուզենայի ասել, որ դա հիասթափեցնում է»:

Արտահերթ ընտրութիւնների անցկացում պնդող Չայ ազգային կոնգրեսը Յունիսի 30-ին տեղի ունեցած հանրահաւաքի ժամանակ յայտարարել է իր ամառային արձակուրդի մասին եւ իշխանութիւններին մինչեւ Սեպտեմբեր ժամանակ է տւել, որպէսզի նրանք կողմնորոշւեն երկխօսութեանը մասնակցելու հարցում:

Սակայն արդէն ակնյայտ է, որ Սեպտեմբերից յետոյ արտահերթ ընտրութիւններից խօսելն անիմաստ կը լինի, քանի որ երկիրը կը մտնի նախընտրական շրջան՝ խորհրդարանական ընտրութիւնները կանցկացւեն 2012 թ. գարնանը:

Չանրահաւաքի մասնակիցները որոշեցին հերթական հանդիպումն անցկացնել Օգոստոսի 1-ին, սակայն շատերը կատակում էին, որ աւելի լաւ կը լինի հաւաքւեն Սեւանայ լճի ափին՝ միենոյն է, քաղաքական յայտարարութիւններ չեն լինելու, գոնէ հնարաւոր կը լինի հանգստանալ լաւ ընկերակցութեամբ: Երեկայ հանրահաւաքն առանձնանում էր սակաւաթիւ մարդկանցով, ու թէեւ ընդդիմութեան առաջնորդները փորձել են բացատրել դա սեզոնային պասիւութեամբ, սակայն ակնյայտ է, որ Կոնգրեսի հանդէպ հետաքրքրութիւնը զգալիօրէն նւազել է՝ իշխանութեան հետ երկխօսելու փորձի պատճառով: Նախեւառաջ հիասթափուել է ընդդիմադիր զանգաւածի աւելի արմատական տրամադրուած մասը, որը համոզուած է, որ իշխանափոխութեան հնարաւոր է հասնել միայն հասարակական ճնշումն ուժեղացնելով եւ իշխանութիւններին հարկադրելով հրաժարական տալ: Կոնգրեսի առաջնորդ, Գ

առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի խաղաղասիրական ժեստերը համոզել են նրա համախոհներից շատերին, որ Կոնգրեսը չի «ճնշում» եւ չի պատրաստուում յեղափոխութիւն անել: Բողոքող զանգաւածի միւս մասը չի հասկանում, թէ ինչպէս Կոնգրեսը, որը մինչ օրս ներկայիս իշխանութիւններին թաթար-մոնղոլական էր անւանում, կարող է բանակցութիւնների գնալ այն մարդու հետ, որին մեղադրում են իշխանութիւնը բռնազաւթելու մէջ: Նոյնիսկ դաւաճանի համբաւ ունեցող Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարեանը մեղադրել է Լեւոն Տէր-Պետրոսեանին կոնիւկտուրային քաղաքականութեան մէջ: 2008 թ. ընտրութիւններից յետոյ ընդդիմադիր թեկնածու Բաղդասարեանը կոպիցիա է մտել Սերժ Սարգսեանի հետ եւ մինչ օրս արդարանում է այդ քայլի համար: Նա յայտարարել է, որ Տէր-Պետրոսեանն այժմ անում է այն, ինչն է մեղադրում էր Բաղդասարեանին 3 տարի առաջ: Իշխանութիւնում էլ լուրջ չեն վերաբերում Կոնգրեսի պահանջներին: ՅԱԿ-ին միանգամայն կարող է բաւարարել նշանակած ժամկետից մէկ շաբաթ ուշ անցկացւած ընտրութիւնների անցկացումը, միայն թէ դրանք «արտահերթ» կոչւեն: Այս մասին երկէ յայտարարել է ԱԺ-ում ԳՅ նախագահի մշտական ներկայացուցիչ Գառնիկ Իսագուլեանը: Նա ընդգծել է, որ դա արւում է միակ ընդդիմադիր ուժի գոյութեան տպաւորութիւն ստեղծելու համար: Իսագուլեանը յայտարարել է, որ իշխանութիւնը Կոնգրեսի մէջ չի տեսնում ընդդիմութեան մարմնացում: Կոնգրեսի նախկին եւ



ներկայիս համախոհների համար ամենաանհասկանալի հարցը նրա նպատակն է: Տէր-Պետրոսեանը հանրահաւաքում հաւատացրել է, որ ՀԱԿ-ի նպատակը ոչ թէ անպայման իշխանութեան հասնելն է, այլ լեզուի իշխանութեան ձեւաւորումը, աւելին, եթէ արդար ընտրութիւնների ընթացքում յաղթի որեւէ այլ քաղաքական ուժ, ապա ՀԱԿ-ը կը շնորհաւորի նրան: Դա նշանակում է, որ Կոնգրեսը չի բացառում, որ կարող է «համոզել» իշխանութեանը «արդար» ընտրութիւններ անցկացնել, որի ընթացքում կը յաղթեն ներկայիս իշխող ուժերը, որին Կոնգրեսը մեղադրում է ներքին եւ արտաքին քաղաքականութեան ձախողման, զաւառականութեան եւ դիւետանտութեան մէջ: Սոցիալական ցանցերում բուռն բանավիճում են այս հարցի առնչութեամբ, եւ դրա մասնակիցները հակած են այն կարծիքին, որ Կոնգրեսի նպատակը ոչ թէ ներկայիս իշխանութիւնը փոխելն է, ինչպէս յայտարարում էր աւելի վաղ (ինչն էլ մարդկանց ձգում էր դէպի ՀԱԿ), այլ խորհրդարանում ինչ-որ թւով մանդատներ ստանա-

լը: Ու թէւ երկուայ հանրահաւաքում ընդդիմութեան առաջնորդները յայտարարում էին, որ Սերժ Սարգսեանին կարող է եզիպտոսի նախկին նախագահ Յոսնի Մուբարաքի եւ Թունիսի նախկին նախագահ Բեն Ալիի ճակատագիրը վիճակել, ակնյայտ է, որ Կոնգրեսն այս երեք տարիների ընթացքում զսպել եւ չափաւորել է հանրութեան ըմբոստութիւնը, եւ այժմ չի կարող յոյս դնել, որ հանրութիւնը արաբական երկրների պէս դուրս կը գայ փողոց՝ իշխանութեան հրաժարականի պահանջով: «Եթէ իշխանութիւնները սահմանաձեւ ողջամիտ ժամկետում երկխօսութեան չզննան, ապա մեր օրակարգում կը մնայ ընդամենը մէկ պահանջ, այն է՝ նախագահ Սերժ Սարգսեանի եւ իշխող կուլիցիայի անվերապահ հրաժարականը», - յայտարարել է Տէր-Պետրոսեանը հանրահաւաքում: Սա նոյնպէս տարակուսանք է առաջացրել, քանի որ այս պահանջն ամէն անգամ առաջ է քաշել 2008 թ. ընտրութիւններից յետոյ: Փոխարէնը՝ Տէր-Պետրոսեանը յայտարարել է, որ Կոնգրեսն ուշադրութիւնը կենտրոնացնելու է


Մարտի 1-ի գործի բացայայտման վրայ: Նա ասել է, որ իրենց չի գոհացնում հետաքննութեան ներկայիս ընթացքը: Տէր-Պետրոսեանը կարծում է, որ անհրաժեշտ է հարցաքննել ոստիկաններին, որոնք հրազէն են կիրառել: Նրանք իրենց վրայ մեղք չեն վերցնի եւ կասեն, որ զէնք կիրառելու հրաման են ստացել վերելից, եւ այդպէս գործը կը հասնի մինչեւ Սերժ Սարգսեան, ասել է Տէր-Պետրոսեանը: Ընդ որում նա յայտարարել է, որ քննութեան առարկան բախումների ժամանակ 10 մարդկանց սպանութիւնների բացայայտումն է: Դա նշանակում է, որ Կոնգրեսը չի պնդի, որպէսզի դատական քննութեան ընթացքում քննարկւի ընտրութիւնների կեղծման եւ իշխանութեան բռնազաւթման հարցը, որն էլ դարձել է յետընտրական հանրահաւաքների եւ բախումների պատճառ:

*Հայաստանի լուրերի եւ վերլուծութիւնների աղբիւր՝  
www.armenianow.com*

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այս երկու յղացքներու դրացիութիւնը հազազհազ երեւոյթ է մեր մօտ: Բառերը մաշած գունատած գորգերու պէս կորսնցուցած են իրենց ճշգրտութիւնը, ինկած են շրջուն վաճառորդներու ուսերուն: Այնպէս որ այսօր «մշակոյթ» գաղափարը կը զուգահիսի գլխաւոր արժանութեան հետ, ժամանակակից հայ գրականութիւնը, այդ կոճկած, ինքն իր շուրջ դարձող, անուշահոտ գործածող տարիքոտ ամուրիներուն կը հանդիպինք քունսերներու միջնարարին: Մեր մէջ, գրականութիւնը շատ ալ տարբեր չէ գրականութեան մասին դասախօսութենէ, տարբեր չէ այդ դասախօսութեան մասին թերթի դրկւած թղթակցութենէ: Մշակոյթի կը կարծենք ծառայել, երբ անցեալի վարկով (յաճախ խնդրական...) կը ծպտուինք, կը փորձենք մենք մեզ խաբել կամ ուշադրութիւն գրաւել միջազգային սակարանի մէջ: Աստուած չընէ, որ օտար մը գովէ մեր ժողովուրդի ձգած հետքը պատմութեան ճամբուն, երկու անուշ խօսք ընէ մեր մասին կը ծռինք կօշիկին փոշին կ'առնենք...:

Մշակոյթը դեռ հոմանիշ է Կովկասեան պարի, էսթրատային երաժշտութեան, կէս-ականջ պատարագին, նոյնիսկ ամավերջի հանդէսին...: Եթէ այս բոլորը իրար



Հայ Դատի քաղաքական բնոյթը կը պահանջէ, որ խելքով, լրջութեամբ, ծրագրուած ու մանաւանդ գաղտնի եղանակով արծարծուի, հետապնդուի: Եւ ոչ թէ վերածուի աղմուկ հանելու, թուրքը հարուածելու, մարդկութեան խիղճը ցնցելու հրապարակային մարզանքներու որոնց հետեւանքները անկարելի է մախատեսել:

**Վահէ Օշականի գրչին պատկանող այս յօդուածը առաջին անգամ հրատարակել է 1973 թականին «Երիտասարդ հայ» թերթում: Փարիզում հրատարակող «Նոր Յառաջ»-ը այն վերահրատարակել է իր 2010 թականի Հոկտեմբեր 30-ի համարում: Նկատի առնելով, որ դրանում քննարկող հարցերը պահել են իրենց թարմութիւնը եւ առնչում են նաեւ մերօրեայ պայմաններին, այն ներկայացնում ենք մեր ընթերցողներին:**

խառնենք ու հասարակած յայտարարի զարնենք, երեւան կու գայ կրաւորական ու ցեղակեղորոն նկարագիրը մեր ըմբռնումին:

«Քաղաքականութիւն» գաղափարն ալ նոյն այլասերած ճակատագրով վիրաւոր է: Քանի քանի՛ իմաստ ու երանգ - մոլուցքէ մինչեւ քոքթէյլ ու ճառ, անցնելով ցոյցէն ու սգահանդէսէն: Վտանգաւորն ու անվնասը իրար խառնող խաղ է ան: Ու ինչքան ամբոխային ակամայ մղումներ, ամլութիւն ծածկելու ինչ ճիգ՝ որ իրար դէմ կը նետէ քաղաքական ու դասակարգային մոլեռանդութեամբ զինուած խմբաւորումներ, որ Հայ Դատը կը վերածէ սուգի, վրէժի պոռոտախօսութեան դաշտահանդէսի մը ուր կը կոխկռտուի պուտ մը խելքը, որ դեռ մնացեր է մեր անցեալի իմաստութենէն: Ինչքան մաղձ՝ մեր խօսքերուն ու լռութիւններուն

### Վահէ Օշական

տակը, որ նոյնիսկ չի վարանիր նախատեսելու անոնք, որոնք հայրենիքի գաղափարով մեռան կէս դար առաջ: Մարդ սոսկումով կ'անդրադառնայ որ մեր կեանքի գրեթէ բոլոր երեւոյթները դեռ փստալի ստորադասութեան մը կնիքին տակը կը մնան: Հինգ դար տեւող ստրկութեան թոյնը ազգային խառնածքին մէջ մտած է ու ոչ քսան է ու ոչ քսանհինգ տարի ըմբոստական

հապճեպ զգայնութիւն, ոչ ալ կէս դար ազատ, անդորր կեանքի փորձարարութիւն՝ կրցած են մաքրել մեր արիւնը: Դեռ շղթայուած ենք այդ դարերուն, թուրքին. դեռ անոր յաճախանքն է, որ կը ձեւաւորէ մեր դատումները, մեր զգացումները: Դեռ պէտք ունինք թուրքին, ըստ երեւոյթին, պէտք ունինք զայն ատելու, անոր հակադրելու՝ որպէսզի շեշտուի մեր ինքնութիւնը: Ետ դէպի գերութիւն...: Ու որքան կրկնենք թուրքին անունը ու հրահրենք ժխտական զգացումներ՝ այնքան աւելի կը խրիկնաւոր անդոհանքին մէջ: Թէ այս հոգեբանութիւնը ջարդելու սարսափէն առաջ կազմուած էր այն դարերուն, երբ մեզի համար ապրիլը մեռնելու հոմանիշ էր՝ բան չի փոխեր մեր վիճակէն: Տեղ մը ըսուած է որ աղէտներէ

առաջ ժողովուրդներ կը մահա-  
ման իրենց ոգիէն ու խելքէն...:

Այս է կացութիւնը:

Չոր կամաց-կամաց, խելքով ու  
լրջութեան, լարած ռումբ մը քա-  
կելու զգուշութեամբ, փորձելու է  
բարեփոխել: Հասկցնելու է թէ այ-  
սօր մշակոյթը քաղաքակրթու-  
թեան մը մէկ երեսն է, թէ քսանե-  
րորդ դարուն ապրող Հայութիւն  
մը, որ անցեալի արուեստէն աւելի  
ընելու ատակ չէ՝ ինքզինքը լոկ կը  
խաբէ, երբ այդ արուեստով կը  
փառաբանուի: Գեղեցիկ բան է,  
օրինակ, հայ ճարտարապետու-  
թիւնը վկայ բերել, Չարենց ու Վա-  
րուժան թարգմանել, օտար պար-  
բերաթերթերու մէջ պարագայա-  
կան յօդուածներ գրել հայ մշա-  
կոյթի մասին, գեղջուկ երգերն ու  
պարերը ոճաւորելով քաղքենի  
հասարակութիւններու հրամցնել-  
այդ ամբողջը լաւ, սակայն ո՛ր է  
մեր օրերու արուեստը, ո՛ր է հայ  
արդի մշակոյթը որ ազուցուած ըլ-  
լայ արդի քաղաքակրթութեան:  
Մոմով փնտռելու է: Բարեբախ-  
տաբար որ նկարչութիւնն ու  
երաժշտութիւնը ու թատրոնը կը  
փրկեն մեր պատիւը: Անուրանալի  
է անշուշտ Հայաստանի նպաստը  
այս կալուածին մէջ: Բայց, ամէն  
պարագայի, թող սփետտներ  
չպոռան մեր երեսին թէ հող չու-  
նինք մեր ոտքին տակը, թէ տակաւ  
լեզու մը պիտի չունենանք մեր  
բերնին մէջ: Ատիկա մենք լաւ գի-  
տենք: Այդ չէ սակայն հարցը: Մե-  
զի համար աւելի կարելոր է որ  
մեր արուեստի մարդիկ հասկա-  
ման թէ ազգային անջատ մշակոյթ  
յղացքը ժամանակաւորապէս է  
ներկայիս, թէ պէտք է ստեղծեն՝  
եթէ կը յաւակնին ծառայել ազգա-  
յին յատուկ մշակոյթին, ժամանա-  
կակից չափանիշներու, տագ-  
նապներու ցանցին մէջ: Արուեստը  
միջազգային լեզուի կը փոխուի ու  
արուեստագէտը, մեծ թէքնոքրաթ-  
ներու նման, կը յեղաշրջուի դէպի  
ինքնութիւն մը որ դուրս է ազգա-  
յին ծիրէն: Այսօր արուեստը յեղա-

փոխական զէնք ու արարք է նոյն  
ատեն ու մեծագոյն վտանգը՝ բռ-  
նատիրական մտայնութեան ու  
կարգերու:

Աւելի վտանգաւոր ուժանակ է  
քաղաքականութիւնը: Ամաթօր-  
ներու ձեռքը ու խուժանային  
տրամադրութիւններու քմայքին  
տակ՝ աղէտի կրնայ տանիլ մեզ  
ազգովին, անցեալով ու ներկա-  
յով: Պետութիւններու ձեռքը սա-  
կայն, քաղաքականութիւններ ըն-  
տանի գազան մըն է, սանձուած ու  
օգտակար անոր որ բռնած է սան-  
ձը...:

Եզրակացութիւն.- Հասկցնելու  
է, առ որ անկ է, թէ Հայ Դատի քա-  
ղաքական բնոյթը կը պահանջէ,  
որ խելքով, լրջութեամբ, ծրագր-  
ուած ու մանաւանդ գաղտնի եղա-  
նակով արծարծուի, հետապնդ-  
ուի: Եւ ոչ թէ վերածուի աղմուկ  
հանելու, թուրքը հարուածելու,  
մարդկութեան խիղճը ցնցելու  
հրապարակային մարզանքներու՝  
որոնց հետեւանքները անկարելի  
է նախատեսել: Այսինքն, միանգա-  
մընդմիշտ անջատելու ջարդելու  
հարցը, սուզը, վրէժը ու թուրքը ու  
ասոնց ամբողջ զգացական բռ-  
վանդակութիւնը՝ հայ հողերու,  
Հայ Դատի պարունակէն, որ զուտ  
քաղաքական բան մըն է: Ժամա-  
նակ չունինք այլեւս երկու օրը  
անգամ մը թուրք խաղցնելու,  
անոր ոճրային բնոյթը հազարե-  
րորդ անգամ կրկնելու հանդէպ  
մեր անզօր ատելութեամբ սե-  
րունդներ թունաւորելու: Ձգելու է  
որ նորագոյնները գոնէ առողջ  
մեծնան: Աւելի կարելոր գործեր  
կան - Սփիւռքեան ինքնութիւնը,  
սփիւռքեան լինելութիւնը, մեր  
արուեստը, 20-րդ դարը, ամբողջ  
կոյս ապագան:

Այսպէս է, որ մշակութային քա-  
ղաքականութեան մը գաղափարը  
կը յստականայ: «Ան որ չի ծրա-  
գրեր իր ապագան, ապագայ իսկ  
չունի»: Մշակոյթի մարդիկ պէտք է  
հասարակաց լեզու մը գտնեն ու  
մազլցին իրենց հատուածական

բոլոր հաւատարմութիւններէն  
վեր տեղ մը, կարենան մտածել  
միասին մեր ազգի տագնապներու  
մասին, ապագայի մասին: Քաղա-  
քականութիւն մը վարելու չափ  
լուրջ, մասնագիտական գործ է  
ասիկա: Ու չի բաւեր վկայական,  
կրթութիւն, տաղանդ ու հայրենա-  
սիրութիւն այս արարքին համար:  
Մշակոյթի մարդը ասոնցմէ աւելի  
բարոյական կորովի ու խելքի  
պէտք ունի, արժեցնելու համար  
իր կարողութիւնները, իր պատ-  
րաստութիւնը ու յեղափոխական  
կոչումը:

«Յեղափոխական» բառը կը  
գործածենք, որովհետեւ չի բաւեր  
միայն խելքն իսկ: «Ժողովուրդնե-  
րը կը զարգանան ոչ թէ պահպա-  
նողական կղզիացումով, այլ յոր-  
դող, յարձակող յուզումներու հս-  
կայ գրոհով», կ'ըսէ Օշական  
«Մնացորդաց»-ի մէջ, թուրք փա-  
շայի բերնով: Ոչ մէկ կասկած թէ  
կայ այդ ուժը մեր մէջ, տակաւին:  
Յեղափոխական ուժը արուեստի  
ու արուեստի մարդուն: Կը մնայ  
միայն շղթայագերծել զայն խել-  
քին հետ ու խելքէն վեր նոյնիսկ:  
Թուրք փաշան անշուշտ կ'ակնար-  
կէր բնագոյնին, տարերային ու-  
ժերու: Մեր պարագային՝ ոգիին ու  
արուեստին ուժն է նաեւ դարերու  
կտակած ու տեղ մը կորսուած  
բնագանցական իմաստութիւնը,  
որ երեւան պիտի գայ, երբ թօթա-  
փենք կամ զգուշութեամբ մաք-  
րագործենք թուրքին ձգած ստր-  
կային հոգեբանութիւնը: Ասիկա  
գործը պիտի ըլլայ մշակոյթի մար-  
դոց:

Ազնիւ բան է ազգին համար,  
իտեալին մը սիրոյն զոհուիլ, հերո-  
սանալ: Սակայն յաճախ աւելի դժ-  
ւար է չհերոսանալ, պարզապէս  
ՄԱՐԴ ըլլալ, բառին բովանդակ  
իմաստով: Այդ է «մշակութային  
քաղաքականութեան» նպատա-  
կը:

# ԷՊ ՄԱՐԴԸ ԱՐՁԱՆԱ ԵՂԵԼ

Շանթ Բաղդասարյան

Չելենը զանգեց: Լացում էր...

Իմացայ, որ Արտաշէս Արամեանը մահացել է: Մի երկու մախադասութիւն ու Չելենին իմաց տւի, որ կէս ժամից իր մօտ կը լինեն, յուղարկաւորութեան գործերը դասաւորելու համար: Շատ չազուեցի, ախր մախապէս մի կուշտ լացել էի իմ ուսուցչի համար:

Կանչել էր ինձ... Երէկ իր մահամերձ մահճակալի մօտ երկարբարակ խօսել էիք: Վերջում պարզւել էր, որ Արտաշէս Արամեանը միւս օրը իր տնում չի լինելու: Նա մի ամբողջ կեանք ծրագրւած էր ապրել ու ինձ համար զարմանալի չէր, որ ականատես էի իր ծրագրւած մեռնելուն: Նրա կեանքը, անգամ մահը շէյնարական ժամացոյցի պէս՝ ճշգրիտ էր, անսխալ:

Գրքերով լի սենեակը նոյն էր, բոլորն էլ իրենց տեղումն էին՝ Յերոզոտը, Պլոտարկը, Ջէնոնը ... Նոր գիրք չէր առել, գրասեղանի վրայ գիրք չկար, ակնոցն էր, գրիչը ու սպիտակ մի ծրար:

Անցած տաս տարիներում, հէնց նոյն սենեակում էինք հանդիպել: Խօսել էինք մարդուց, գրքից, քաղաքում բեմադրուող թատրոններից ու վերջում մահիշտ լռել ու լսել էր: Լսում էր իմ կեանքի վերելքների ու վայրէջքների մասին, արկածների ու ծանծրալի պահերի պատմութիւնը ու միշտ ժպտադէմ ասում էր՝ «Լաւ է, գտնում ես կեանքի գաղտնիքը, լաւ է...», ու երբ նկատում էր, որ անորոշութեան ճահճում եմ գտնուում, խորհուրդ էր տալիս՝ «Որոշիր, որոշիր անելիքդ, կեանքը որոշումների

շարան է...

Այո, տասը տարի էր, ինչ-որ մի կրօնական ծիսակատարութեան պէս, ամենայն հաւատքով ու ճշտապահութեամբ, իւրաքանչիւր հինգշաբթի ժամը 5-ին հանդիպում էիք:

Կոստիւմս հագած, փողոց եմ դուրս գալիս, անցնում առաջին խաչմերուկը ու վեր բարձրանում՝ Արամեանի բնակարանի ուղղութեամբ: Ժողովուրդը ինչպէս միշտ փողոցում եմ, աղմուկ, ծիծաղ ու կեանք... Միշտ էլ այդպէս է եղել, կեանքն ու մահը այնպէս են իրար միաձուլւել, որ չես նկատում այս մեծ անդունդի հարցը, այս մեծ անդունդի ակը: Ա՛հ, Արամեանը հիմա աթոռի, քարի ու այս քիպերի հետ, ոչ մի տարբերութիւն չունի ու այս շրջադարձը պատահում է ամէն տեղ, ամէն վայրկեան ու ես մարդ կոչւածը համբերում է այս մերկացած ծաղրանկարը՝ կեանքի ու մահի այս աննկատ անդունդը:

Երէկ Արամեանի սենեակի միակ բազկաթոռի վրայ՝ արդուկւած ու ծալւած էր սպիտակ շապիկը, սեւ կոստիւմն ու մոխրագոյն փողկապը:

Ուսուցիչս, որ 3 տասնեակ տարիներ առաջ ինձ պատմել էր մեր պատմութեան ու լեզուի մասին ու այն օրերում, հիացած իրենով, միշտ խնդրում էի, որ մի նոր պատմութիւն պատմի՝ հերոսական կամ սիրային, Տորքի կամ Արայի ... տես ո՞ր էր հասել՝ երէկ ինձ խնդրեց, Չելենի հետ միասին օգնենք իրեն լողանալ ու հագնւել: Պարզապէս մեր գործն էր հեշտացնում:

Մարդկային պատմութեան մէջ չեմ կարծում գտնուի «Յոմո Սապիենս» մարդացեղից մի նմուշ, որ մեռելի լողացնելը գերադասի շնչաւորի: Եւ վստահ եմ թէ Արամեանը այդ փաստը գիտէր, ինչպէս որ ամէն ինչ գիտէր, այն ինչ գրւել էր Սոկրատեսից մինչ այսօր:

Չելենի հետ միասին, նրան բաղանիք տարանք: Ժպտաց՝ «Չէի կարծում մի օր պիտի մերկանամ քո առաջ... բայց կարծեմ հիմա աւելի լաւ է քան վաղը»:

Ես էլ ժպտացի: Իհարկէ երեսիս մկանները ժպտացին...

Լրիւ մերկ նստեց բաղանիքի եզրին: Մաշկը հաւաքւած էր, վերին աստիճանի կնճռոտ, հարթ ոչ մի տեղ չկար: Մաշկի գոյնը փոխւել էր՝ սրճագոյնի, մուգ կապոյտ կլորներով: Մանրաբերակները չէին գործում, արիւնը հաւաքւել էր մաշկի տակ: Մի տեսակ էր Արտաշէս Արամեանի մարմինը, տճել էր, հեղուկի պէս՝ որ կողմ թեքում էր, պառաւած մկանները այն կողմ էին գնում: Օճառը չէր հոսում անձեւ մարմնի վրայ, ջուրն էլ չէր օգնում: Պիտի օգնէիր ջրին, ձեռքով մկանները տեղափոխէիր, ակօսներ փորէիր մարմնի մէջ, որ օճառը անհետանար մարմնի վրայից: Պիտի մաշկ մաշկի քսւէր, Իմը-Արամեանինը, Արամեանինը-Չելենինը: Պէտք է շօշափէինք... մարդու այս զգայարանը շեշտադրում էր մերկ մարմնի մահը, այս մերկ պահի դաժանութիւնը... ու այս դաժանութիւնը լեզու էր բացել, մեռնող մարմնի լեզուով:

Յիշեցի հէնց ինքը Արամեանն էր ասել մի օր՝ «Տարիքը բարձրանալուն պէս մարմնի անդամները

սկսում են խօսել՝ ցաւի ու վերջի մասին, երբ երիտասարդ ես նրանք չկան, աներեւոյթ են ...»:

Ինքը Արամեանը, Յելէնն ու ես, զգւանքով կատարեցինք մեր պարտականութիւնը՝ անխօս, մեքենայաբար:

Հասել եմ Արամեանի տան առջեւ: Տարիների հոսքը աննկատ է, երազային: 10 տարի առաջ էի կանգնել այս դռան շեմին: Առաջին հանդիպումն էր տարիներից յետոյ: Դպրոցը աւարտելուն պէս, արտասահման էի մեկնել, սակայն այդ ամբողջ տարիների ընթացքում նամակագրութիւնը չբաժանեց ինձ իմ սիրասուն պատմիչից: Վերադառնալուն պէս, այս մեծ քաղաքում, իմ առաջին հանգրւանը եղաւ Արամեանի բնակարանը:

Արամեանին հագցրինք: Մաքուր ու կոկիկ էր, ինչպէս միշտ: Հագուստը նրա հեղուկային մարմինը սուլիդացրեց: Ժպտաց՝ «Շնորհակալ եմ» Յելէնը սկսեց

լացել ու թողեց սենեակը: Արամեանը իր յոգնած ձայնով բացականչեց «Յելէն, սիրելիս, սուրճ բեր...», - իջեցրեց ձայնը՝ վերջինը ...

Դռան առաջ կանգնել եմ ու այս ամէնը, ինչ կատարուեց մեր մէջ անընդհատ կրկնուում ու բազմանում է ուղեղումս, բազմանում ու կրկնուում է, կրկնուում, կրկնուում...

Սուրճը խմեցինք: Ժպտաց ու շնորհակալութիւն յայտնեց: Վերջում ցտեսութեան պահին ասաց՝ «Տղայ ջան, գրասեղանի վրայ մի նամակ կայ, վերցրո՛ւ, քեզ համար եմ գրել, կարդա՛ ու որոշի՛ր»:

Կանգնել եմ Արամեանի դռան առջեւ... Ձեռքս մեկնել եմ զանգին, բայց դեռ չեմ սեղմել: Կողքիս մի երիտասարդ մայր, իր փոքրիկ աղջկան է միզեցնում...

Նամակը, որ տեղադրել եմ շապիկիս զրպանը բարձրացրել է սրտիս զարկերակը ... Մահը միա-

կողմանի է, անդարձ, առաջ ու առաջ, իսկ կեանքը բաւիղ ու դէմս ցցած էս զանգը Պէնէլոպէի կօփկը...: Մարմինս սառել է, Արամեանը մայթում կանգնած ինձ է նայում՝ «... քեզ համար եմ գրել, կարդա ու որոշի՛ր»:

Փոքրիկ աղջիկը կարծես թէ աւարտել էր մէզը ու իր զիւ ձայնով ճոււղ էր, ճոււղ՝

- Մամա՛, մամա՛, էդ մարդը արձանա եղել...

Մայիս-Յունիս 2011  
Թեհրան

*Հոյս*

-ի մէկամեայ բաժանորդագրութիւնը, լաւագոյն նւերը՝ ձեր հարազատներիս եւ արտասահմանում ապրող բարեկամներիս:

Մէկամեայ բաժանորդագրութեան գինը  
Իրանում՝ 30,000 թուման  
Արտասահմանում՝ 200 դոլլար



Ոչ մի բանկային վճարում:

Միայն զանգահարէք մեզ, եւ մեր սուրհանդակը կայցելի ձեզ՝ ձեր տանը:

**6 6 4 9 5 1 8 0**  
**6 6 4 9 5 2 0 8**  
**6 6 4 9 2 6 9 3**



# ՇՈՒՇԻ ՄՁԿԻԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

## ԵՐԲ ԱՉԳԵՐԻ ՄԷՋ ԽՕՍՈՒՄ Է ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ

*Արմինե Մելիք - Իսրայելեան*

ԼՂՀ - ի քաղաքական եւ հոգեւոր իշխանութիւնների կողմից յատուկ պահպանութեան եւ վերահսկողութեան են ենթակայ պատմական նշանակութեան յուշարձաններն ու կառոյցները, անկախ կրօնական պատկանելութիւնից: Աւաճի վառ ապացոյցն են Շուշիի 18-րդ դարավերջի 19-րդ դարասկզբին կառուցւած եւ 1849 թականի դրութեամբ թուով 9 պարսկական մզկիթները: Մահմեդական հաւատի այս կառոյցները, որոնք պատկանում են շիա եւ սուննի կրօնական հոսանքներին հետեւորդ մահմեդականներին՝ կառուցւել են հիմնականում 18-ից 20-րդ դարերի ըն-

թացքում, իրենց ներկայութեամբ հաստատելով տարածաշրջանում ապրած մահմեդական կենտրոնների մասին, նրանց այստեղ հաստատուելու ժամանակաշրջանների յստակ վկայութիւնը դառնալով, իրենց պատերին արւած հիմնականում կրօնական «Ղորանից» վերցւած ելնդագիր արձանագրութիւններով եւ թուրքերէն ու արաբերէն կցկտուր վկայութիւններով՝ նրանց ստեղծման տարեթի ու կառուցողի մասին: Այդ կառոյցներից յայտնի է Իբրահիմ խանի դուստր Գոհար խանումի մզկիթը (յայտնի է, որպէս «Գոհար աղայի մզկիթ» անւանումով. հարուստ եւ աւելի բարձր դիրք ունե-

ցող մահմեդական կանանց ինչպէս տղամարդկանց աղա են անւանել, նշելով նրանց սոցիալական բարձր դիրքը...): Ըստ հաւաքագրւած տւեալների վրայ ՀՀ պատմութեան ինստիտուտի կողմից արւած ուսումնասիրութեան՝ կարող ենք ընդհանրական նկարագիր տալ պատմական Շուշիի ներկայումս եւս գոյութիւն ունեցող մահմեդական կառոյցների մասին: Շուշիի ամենահին մզկիթը հիմնւել է 1752թ. (հիջրայի 1167թ.): Համեմատաբար աւելի վաղ կառուցւած մզկիթների մուտքից վեր՝ աջ կողմում ագուցւած սալիկին արաբերէն ելնդագիր եռա-



տող արձանագրւած է. «Կարաբաղ: «Գործը ճարտարապետ Քարաբալա Սաֆա Խանին: 1291 (1874- 1875) :

Շուշի քաղաքի ազատագրումից յետոյ «Շէն» միութեան ջանքերով վերականգնւած մզկիթներից մէկը քաղաքի երկրորդ մզկիթն է, որի թւագրումը պատկանում է 1883/ 1884 թթ: 4 սիւների վրայ կանգնած ընդարձակ դահլիճ ունեցող այս մզկիթի հարաւարեւմտեան անկիւնում վեր է ձգւում աղիւսաշէն մինարէն: Այս մզկիթի վրայ նոյնպէս, մուտքից վեր գտնուող ճակատային մասում պահպանւած արձանագրութիւնը արաբերէն ելնդագիր եռատող է, որտեղ գրւած է. «Կարաբաղ»: Գործը ճարտարապետ Քարաբալա Սաֆա Խանին: 1301 (1883- 1884): Այս մզկիթի վրայ պահպանւած արձանագրութիւններից է նաեւ արաբերէն 7 տողից կազմւած ելնդագիրը, որում ասուում է. «Ամենա-

կարող Աստոյ անունով»: Ով, որ հաւատում է Աստոյ մզկիթները: Ասուած, Մուհամմեդ, Ալի, Ֆաթմա, Յասան եւ Յոսէին: Կիսամաղինլու մզկիթ, թիւն 1312 (1894- 1895): Շուշիի ակնառու մզկիթների թիւն է պատկանում 1800-ականների վերջերին կառուցւած զոյգ մինարէներով մզկիթը, որն ունի 4 սիւների վրայ կանգնած ընդարձակ դահլիճ եւ ներքին բակով մզկիթակից շինութիւններ՝ հիւսիսային կողմից: Նրա ճակատային մասում պահպանւած ելնդագիրը վկայում է. «Կարաբաղ: Գործը ճարտարապետ Քարաբալա Սաֆա Խանին: 1301/ 1883- 1884/»: Այս մզկիթի շրջակայքում գտնուող գերեզմանոցում գտնուող եւ պահպանւած մի քանի արձանագիր գերեզմանաքարեր կան, որոնք թւագրւում են 20-րդ դարի սկզբներին: Տապանաքարերի վրայ կան արձանագրեր, որոնք ունեն կրօնափիլիսոփայական

ուշագրաւ բովանդակութիւններ: Օրինակ վեցատող կրող ուղղահայեաց կանգնած գերեզմանաքարի դիմային երեսին արաբերէն ելնդագրով կարդում ենք. «Ամէն ոք համտեսելու է մահը»: Յանգիստ հանգուցեալ հաջի Մուհամմեդի որդի հանգուցեալ Կոջայի... 1323 (1905- 1906): Նմանատիպ, մէկ այլ գերեզմանաքարի արեւելահայեաց դիմային երեսին արաբերէն ելնդագիրը 7 տող է պարունակում, որտեղ ասուում է՝. «Ամէն ոք համտեսելու է մահը»: Յանգիստ հանգուցեալ Քարաբալա Յոսէին Ալի Ջադայի որդի ներւած հանգուցեալ Քարաբալա Նուրայի: Մահացել է 29 ջումադա ալախեր 1323 (Օգոստոս 1905 թ.): Եւս մէկը, որի արեւելահայեաց դիմային երեսին կարդում ենք հերթական արաբերէն ելնդագիրը. «Ասուած է մնում»: Յանգիստ հաջի Իսքենդերի որդի տանջւած նահատակ հանգուցեալ Ալիի: 27 ջումա-



դա ասլանի 1323 (29 Օգոստոս 1905): Այս մզկիթակից գերեզմանոցի շիրմաքարերի արձանագրութիւնները հիմնականում հանգուցեալների մասին վկայագրեր են:

20-րդ դարի առաջին երկու տասնամեակների ընթացքում կառուցւած Շուշիի միւս մզկիթները իրենց գեղեցկութեամբ ու գեղարւեստական յարդարանքով զիջում են վերը թւարկւածներին, զուրկ են կառոյցների շինարարական ընթացքի լուսաբանմանը վերաբերուող որեւէ գրաւոր վկայութիւնից: Այս եւ առաւել ակնառու մզկիթների համար ընդհանուր են թերեւս «Ղուրանից» վերցւած առանձին հատւածների արձանագրութիւնները:

Արցախի պարսկական մզկիթներն վերանորոգում են հայ անհատ բարերարների, պետութեան, Արցախի հոգեւոր թեմի առաջնորդի աջակցութեան շնորհիւ, հաւատարիմ մնալով ազգային մեր ստեղծագործ լուծեանն ու հանդուրժողականութեան համաձայնակային սկզբունքներին... Եւ հայոց հողի վրայ, մեր դարաւոր



եկեղեցիների հարեւանութեամբ այսօր էլ շարունակում են կանգուն մնալ իրենց թւագրւումով համեմատաբար շատ երիտասարդ մահմեդական կրօնական կառոյցները, որոնք մեր պատմութեանը որդեգրւած անցեալի վկայութիւններ են: Նրանք ժամանակակից պատմութեան մէջ կրօնական հանդուրժողականութեան, ազգային յարաբերակցութեան համարժէք հարթկներ պահանջող իրողութիւններ են: Իսկ օրինակելի քայլը՝ Իրանի Իսլամական հանրապետութեան տարածքում գտնուող հայոց եկեղեցիների վերանորոգման ու պահպանման, պետական պահպանութեան

փաստն է, որը դեռ նոր խոստումնալից քայլեր է ի ցոյց դնելու մեր միւս, յարակից հարեւան պետութիւններին. օրինակ՝ Իրանի սահմանին գտնուող Յովկի եկեղեցու վերականգնման իր հերթական ծրագրով:

Ահաւասիկ, ազգային, կրօնական երկխօսութիւն, որ պայմանաւորւած չէ ո՛չ պետութեան ունեցած նաւթային պաշարներով եւ ոչ էլ աշխարհագրական տարածքի մեծութեամբ, այլեւ՝ տուեալ ազգի քաղաքակրթութեամբ, որը նաեւ հոգեկերտւածք է:

# ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԱՄՌԱՆ ՇՈՉ ՕՐԵՐԻՆ



Համարում է, որ մարդիկ ամենից յաճախ ցուրտ եղանակին են հիւանդանում, բայց այդպես չէ: Շոգ օրերին մեր օրգանիզմը նոյնպես բազմաթիւ վտանգների է ենթարկւում, չնայած աւելի շատ վիտամիններ ու արեւի ճառագայթներ ենք ստանում:

### Սիրտը պահպանէք

Ամառը վտանգաւոր ժամանակաշրջան է նոյնիսկ առողջ սրտի համար: Եթէ առանց որելէ պատճառի թուլութիւն էք զգում, շնչա-հեղձութիւն ու կրծքավանդակի ծանրութիւն, եթէ աչքերի առաջ պարբերաբար մթնում է, ու գլխին պտտւում, շտապ դիմէք սրտաբանին:

Ամռանը օրգանիզմի արագ ջրազրկման ու անօթների լայնացման հետեւանքով սրտի ծանրաբեռնւածութիւնը կրկնակի աւելանում է:

### Ստամոքսը փրկէք

Շոգ օրերին ջրի յաճախակի գործածումը թուլացնում է աղիների պաշտպանութիւնը՝ դրանք վնասակար միկրոօրգանիզմների համար դարձնելով խոցելի: Մի խմէք դրսի աղբիւրներից, ձեռքերը յաճախ լւացէք (կամ աւելի լաւ է՝ պարբերաբար սպիրտով մաքրէք), պաղպաղակ կամ առանց հերմետիկ փաթեթաւորման որելէ

այլ սնունդ մի գնէք: Եթէ ստամոքսի խանգարումներից խուսափել հնարաւոր չէ՝ օրական երկու անգամ ակտիւացւած ածուխ խմէք՝ քաշի իւրաքանչիւր 10 կգ-ի համար մէկ հաբ:

### Յիշէք երիկամների մասին

Օրգանիզմ վարակների ներխուժմանը նպաստում են խմիչքի չարաշահումն ու մրսածութիւնը: Սառը ջրերում չլողանաք եւ խոնաւ գետնին չնստէք: Դա թուլացնում է իմունիտետը, առաջացնում մրսածութիւն, պրոստատիտ, յաճախամիզութիւն եւ երիկամի այլ հիւանդութիւններ:

### Խնայէք կոկորդը

Ամառային արձակուրդների մշտական ուղեկիցը նշաբորբն է (անգինա): Դրա պատճառները ոչ միայն սառն ըմպելիքներն ու պաղպաղակն են, այլեւ ջերմաստիճանի փոփոխութիւնը փողոցում ու շէնքերի ներսում, որտեղ օդորակիչներ են տեղադրւած: Ցանկացած մրսածութիւն հարւած է իմունիտետին: Կոկորդացաւերը կարող են ուղեկցել թուլութեամբ ու բարձր ջերմութիւնով, իսկ դա նշանակում է, որ օրգանիզմում ցաւածին մանրէներ են բազմանում: Նման դէպքերում ամէն օր մեղրով ու կիտրոնով թյ խմէք:

Կ ո -

կորդը ողողէք երիցուկի, վաղեմաւի եւ էկալիպտի թուրմով: Օգտակար են նաեւ կանաչ սոխով աղցանն ու սպիրտով թրջոցները:

Յիշէք, որ սառը ջուրը պէտք է փոքր կուներով խմել եւ կէս բաժակից ոչ աւելի:

### Խորհուրդներ սրտային հիւանդներին

1. Ամռանը մի ընդհատէք բժշկի նշանակած դեղորայքի գործածումը:
2. Շոգ եղանակին ֆիզիկական ծանրաբեռնւածութիւնը սահմանափակէք:
3. Չգտէք 20 րոպէից երկար արեւի տակ չմնալ:
4. Շոգի դէմ սառը ջրով մի պայքարէք՝ հնարաւոր է անօթների նեղացում:
5. Քրտնելիս հնարաւորին չափ շատ հեղուկ խմէք:

Յիշէք, որ գազաւորւած ըմպելիքները բարձրացնում են արեան ճնշումը եւ որպէս հետեւանք՝ բացասաբար անդրադառնում սրտի վրայ՝ մեծացնելով անօթների խցանման եւ կաթւածի վտանգը:

# Ժ Պ Ի Տ

## 5 ԲԱՐԵԿԱՍ, 5 ԹՇՆԱՍԻ

տագոտութիւնների արդիւնքների՝ հէնց դրական յոյզերն են մեր օրգանիզմն ու առողջութիւնը պաշտպանում սթրեսի

### Բարեկամներ

#### Դրական վերաբերմունք կեանքի հանդէպ

Իւրաքանչիւրի կեանքում էլ լինում են մեծ ու փոքր անախորժութիւններ, փորձանքներ ու դժարութիւններ: Բայց միայն մենք ենք որոշում՝ դրանք կը փչացնենք մեր կեանքը, թէ ոչ: Կեանքին ժպիտով ընդառաջ գնալն օգտակար է, իսկ երբ ամէն ինչ վատ է՝ պէտք է աւելի լայն ժպտալ: Ջարմանալի է, բայց դրական տրամադրութեան շնորհիւ մեր կեանքում շատանում են ուրախ պահերը, հետաքրքիր հանդիպումներն ու նոր, երջանիկ ժպիտների առիթները:

#### Առողջ ատամներ

Մենք ուրախանում եւ հպարտանում ենք առողջ ատամներով: Եւ աւելի յաճախ ենք ուզում դրանք ցուցադրել: Հէնց այդ պատճառով էլ ատամների մասին պէտք է վաղ տարիքից հոգ տանել: Աւելի շատ կաթնաշոռ ու մածուն կերէք, օգտագործէք ատամի թել, ատամի լաւ մածուկ եւ յաճախ այցելէք ատամնաբոյժին: Օգտակար սովորութիւն է 2-3 ամիսը մէկ ատամի խոզանակը փոխելը եւ ուտելուց յետոյ բերանը ողողելը:

#### Շոկոլադ

Շոկոլադը, ինչպէս յայտնի է, նպաստում է ուրախութեան հորմոնի՝ սերոտոնինի արտադրմանը: Այնպէս որ շոկոլադէ սալիկը, ծողիկը կամ կոնֆետը ժպիտի երաշխաւորներ են: Միայն թէ յիշէք՝ չա-

րաշահել չի կարելի. աւելորդ կիւրորանները հաստատ չեն նպաստի լաւ տրամադրութեանն ու կենսութեանը:

#### Արեւ

